Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018

Տաթևիկ Մարգարյան, անկախ հետազոտող

Բովանդակություն

Զեկույցի սեղմագիր. Հայաստան 2
Գնահատման մասին 6
Հանձնառությունների իրականացումը 8
1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն 10
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն 14
3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով 19
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով 24
5. Համայնքային որոշումների պորտալ 29
6. Լիցենզիաների գրանցամատյան 33
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում 37
8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում 42
Մեթոդաբանության մասին 45

Open Government Partnership

Զեկույցի սեղմագիր. Հայաստան

Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՀՄ) ամփոփիչ զեկույց 2016-2018

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագիրն ուղղված է հանրային միջոցների թափանցիկության բարելավմանը և պետական կառույցների տեղեկատվությունը հասանելի դարձնելու առցանց գործիքների ստեղծմանը: Սակայն հանձնառություններից շատերը փոքր պոտենցիալ ազդեցություն ունեն և լիարժեք չեն իրականացվել սահմանված ժամկետներում՝ ֆինանսական միջոցների սղության, տեխնիկական խնդիրների և քաղաքական փոփոխությունների պատճառով: Հետագայի համար կառավարությանն առաջարկվում է ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնել և անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել գործողությունների հաջորդ ծրագրի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) միջազգային կամավոր նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել պետությունների կողմից իրենց քաղաքացիների առջև հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, քաղաքացիների լիիրավ մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ուսումնասիրում է ԲԿԳ-ի մասնակից յուրաքանչյուր երկրի գործողությունների ծրագրի իրականացումը: Այս զեկույցն ամփոփում է 2016 թվականի օգոստոսից մինչև 2018 թվականի հունիս ընկած ժամանակահատվածի արդյունքները՝ ներառելով նաև մինչև 2018 թվականի սեպտեմբեր տեղի ունեցած որոշ զարգացումներ:

Աղյուսակ 1՝ Ամփոփ տվյալներ		
	Միջին կյալ	*Ամփոփիչ*
Հանձնառություն-ների քանակը	8	
Կատարման աստիճանը		
Ամբողջությամբ	0	1
Զգալի	2	3
Որոշակի	5	3
Չսկսված	1	1
Հանձնառություններ, որոնք...		
Հստակ համապատասխանում են ԲԿԳ արժեքներին՝	6	6
Փոխակերպող պոտենցիալ ազդեցություն ունեն՝	0	0
Զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել են	2	4
Նշված բոլոր երեքը (✪)՝	0	0
Բերե՞լ է արդյոք բաց կառավարման		
Զգալի	**1**	
Ակնառու	**0**	
Հետագա քայլեր		
Գործողությունների հաջորդ ծրագիր տեղափոխված հանձնառությունների թիվը՝	Կիրառելի չէ	

Հայաստանում ԲԿԳ գործընթացը համակարգում է ՀՀ կառավարության աշխատակազմը, որը 2018 թվականի ապրիլին՝ սահմանադրական փոփոխությունները ուժի մեջ մտելուց հետո, վերափոխվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի[1]: ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագրի համակարգողը կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վահե Ջիլավյանն էր: 2018 թվականի հունիսին այս դերը ստանձնեց ՀՀ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը: Գործողությունների երրորդ ծրագրի ընթացքը վերահսկելու համար 2016 թ. դեկտեմբերին՝ ՀՀ վարչապետի որոշմամբ[2] հաստատվեց բազմաշահառու աշխատանքային խմբի կազմը: Խմբի

Սույն զեկույցը մշակվել է անկախ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի կողմից

կազմում կա 26 անդամ, այդ թվում՝ պետական մարմինների 15 ներկայացուցիչ, քաղաքացիական հասարակության տասը և մասնավոր հատվածի մեկ ներկայացուցիչ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) և հանրությունը ներգրավված էին գործողությունների ծրագրի մշակման գործընթացում, իսկ իրականացման գործընթացում մասնակցությունն ապահովվում էր ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների և կոնկրետ հանձնառությունների շրջանակներում առանձին ՔՀԿ-ների հետ համագործակցության միջոցով: Հանձնառությունների մեծ մասն իրականացվում էր նախարարությունների կողմից, իսկ հանձնառություններից մեկի պատասխանատուն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն էր:

Գործողությունների երրորդ ծրագիրը ներառում էր բաց տվյալների մի շարք նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեին բարելավել պետական ծախսերի թափանցիկությունն ու ծառայությունների մատուցումը: Այնուամենայնիվ, ըստ ԱՀՄ միջանկյալ զեկույցի, հանձնառությունների մեծ մասի պոտենցիալ ազդեցությունը փոքր է՝ պայմանավորված այդ հանձնառությունների նեղ շրջանակներով, ինչպես նաև հանձնառության ձևակերպման հստակության պակասով: Մյուս կողմից, գործողությունների ծրագրի հանձնառությունների միայն կեսն է նշանակալի կամ լիարժեք կերպով իրականացվել, որը պատճառաբանվել է տարբեր գործոններով՝ սկսած ֆինանսական միջոցների սղությունից և տեխնիկական խնդիրներից մինչև քաղաքական փոփոխությունները: Հետագայում խորհուրդ է տրվում ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնել և անհրաժեշտ ժամանակ, բյուջե ու մարդկային ռեսուրսներ տրամադրել գործողությունների հաջորդ ծրագրի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Զեկույցը մշակելու պահի դրությամբ Հայաստանի ինքնագնահատման զեկույցը, ինչպես նաև չորրորդ փուլի գործողությունների ծրագիրը դեռևս հրապարակված չէին:

---

[1] ՀՀ 253-Ն օրենքը «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», 23.03.2018թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120915

[2] ՀՀ վարչապետի թիվ 1206-Ա որոշումը համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին, 16.12.2016, https://www.e-gov.am/decrees/item/16513/

Իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունը

ԲԿԳ մասնակից երկրները գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքում պետք է խորհրդակցությունների գործընթաց ստանձնեն:

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի իրականացման ընթացքում խորհրդակցությունների գործընթացը հիմնականում սահմանափակվում էր ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումներով: Որպես կանոն, կառավարության աշխատակազմի ԲԿԳ կոնտակտային պատասխանատուն հանդիպման հրավեր է ուղարկում ԱԽ անդամներին, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերին, օրինակ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին ու ԱՀՄ հետազոտողին: Հանդիպումները բաց են հանրության համար, պայմանով, որ նախապես դիմում է պետք ներկայացնել[1]: Սակայն, քանի որ հանդիպումները տեղի են ունենում կառավարության շենքում, իսկ հանդիպման մասին տեղեկատվությունը նախապես չի հրապարակվում, հանդիպմանը մասնակցում են միայն հրավիրված անձինք:

Իրականացման ժամանակահատվածում Աշխատանքային խումբը երեք հանդիպում է ունեցել՝ 2017 թ. հոկտեմբերի 30-ին, 2018 թ. փետրվարի 19-ին և 2018 թ. հունիսի 29-ին[2]: Սակայն գործողությունների երրորդ ծրագրի իրականացման գործընթացը քննարկվել է միայն փետրվարին կայացած հանդիպմանը: Աշխատանքային խմբի հանդիպումների արձանագրությունները տեղադրվում են www.ogp.am կայքի «Նորություններ» բաժնում և մատչելի են հանրության համար, առկա է նաև մեկնաբանությունների հնարավորություն: Բացի դրանից, «Ինտերակտիվ բյուջե» հանձնառության շրջանակներում 2017 թ. դեկտեմբերին ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդիպում կազմակերպեց հետաքրքրված ՔՀԿ-ների ու ընկերությունների համար՝ բյուջեի հարթակի նախագիծը ներկայացնելու և հետադարձ կապ ստանալու նպատակով[3]:

Աղյուսակ 2՝ Խորհրդակցությունը իրականացման գործընթացում

Շահագրգիռ կողմերի կանոնավոր հանդիպումների հարթակ	Միջանկյալ	Ամփոփիչ
1. Առկա՞ է արդյոք հարթակը	Այո	Այո
2. Հանդիպումները կանոնավո՞ր են	Ոչ	Ոչ

Աղյուսակ 3՝ Հանրային ազդեցության մակարդակը իրականացման գործընթացում

ԱՀՄ-ն օգտագործում է «Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի» (IAP2) հանրային մասնակցության գնահատման սանդղակը[4]: Այս սանդղակը ցույց է տալիս գործողությունների ծրագրի բովանդակության վրա հանրության ազդեցության հնարավոր մակարդակը: ԲԿԳ-ի սկզբունքներին հավատարիմ լինելով՝ երկրները պետք է ձգտեն «համագործակցության» մակարդակի:

Հանրային ազդեցության մակարդակը իրականացման գործընթացում		Միջանկյալ	Ամփոփիչ
Լիազորում	Կառավարությունը որոշումներն ընդունելու լիազորությունը փոխանցել էր հանրության ներկայացուցիչներին:		
Համագործակցություն	Առկա էր շարունակական երկխոսություն, ԵՎ հանրությունը մասնակցել է օրակարգի սահմանմանը:		
Ներգրավում	Կառավարությունն արձագանքում էր հանրության տրամադրած առաջարկներին:		
Խորհրդակցում	Հանրությունը կարող էր մասնակցություն ունենալ:	✔	✔
Տեղեկացում	Կառավարությունը գործողությունների ծրագրի մասին տեղեկացրել է հանրությանը:		
Առկա չէ	Առկա չէ		

[1] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17

[2] Տեղի է ունեցել ԲԿԳ աշխատանքային խմբի նիստը, ԲԿԳ Հայաստան, 24.11.2017, http://ogp.am/hy/news/item/2017/11/24/WG_2017/; Տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի նիստը, ԲԿԳ Հայաստան, 28.02.2018, http://ogp.am/hy/news/item/2018/02/28/WG_2018/; Նոր կառավարության ԲԿԳ աշխատանքային խմբի առաջին նիստը, ԲԿԳ Հայաստան, 30.06.2018, http://ogp.am/hy/news/item/2018/06/30/OGP_WGnew/

[3] Ժիրայր Տիտիզյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 17

[4] IAP2 հանրային մասնակցության գնահատման սանդղակ, http://c.ymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/foundations_course/IAP2_P2_Spectrum_FINAL.pdf

Գնահատման մասին

ԱՀՄ հետազոտության ընթացքում օգտագործվող ցուցանիշներն ու մեթոդները նկարագրված են ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկում[1]: Ցուցանիշներից մեկը՝ «աստղանշված հանձնառությունը» (✪), լրացուցիչ բացատրության կարիք ունի, քանի որ այն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ընթերցողների համար և խթանում է մրցակցությունը ԲԿԳ մասնակից երկրների միջև: Աստղանշված հանձնառությունները համարվում են ԲԿԳ օրինակելի հանձնառություններ: Աստղ ստանալու համար հանձնառությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների.

- Աստղանշված հանձնառությունը պետք է կոնկրետության «միջին» կամ «բարձր» աստիճան ունենա: Հանձնառությունը պետք է հստակ ձևակերպված գործողություններ և քայլեր ներառի, որպեսզի հնարավոր լինի դատել դրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:
- Հանձնառության ձևակերպումից պետք է պարզ երևա այդ հանձնառության համապատասխանությունը բաց կառավարման սկզբունքներին: Մասնավորապես, այն պետք է վերաբերի տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության կամ հաշվետվողականության ԲԿԳ արժեքներից առնվազն մեկին:
- Լիարժեք իրագործման դեպքում հանձնառությունը «փոխակերպող» պոտենցիալ ազդեցություն պետք է ունենա[2]:
- Գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածում պետությունը պետք է զգալի առաջընթաց գրանցի այս հանձնառության իրականացման գործում ՝ ստանալով կատարման «զգալի» կամ «ամբողջովին» գնահատական:

Աստղանշված հանձնառությունները կարող են կորցնել այդ կարգավիճակը, եթե գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածի ավարտին դրանք զգալի չափով կամ ամբողջովին կատարված չեն:

Հայաստանի գործողությունների ծրագիրը աստղանշված հանձնառություններ չունի:

Վերջապես, այս բաժնի աղյուսակները ԱՀՄ միջանկյալ զեկույցի համար հավաքագրված տվյալների ահռելի ծավալի ընդամենը մի մասն են ներկայացնում: Հայաստանի վերաբերյալ տվյալների ամբողջական պատկերը տեսնելու համար այցելեք OGP Explorer՝ www.opengovpartnership.org/explorer հղումով:

«Բերե՞լ է դա բաց կառավարմանը» փոփոխականի մասին

Կառավարության գործելակերպում տեղ գտած փոփոխություններն արձանագրելու նպատակով ԱՀՄ ամփոփիչ զեկույցում նոր փոփոխական է ավելացվել՝ «Բերե՞լ է դա բաց կառավարմանը» անվանումով: Այս փոփոխականը փորձում է ընդգրկել ավելին, քան արդյունքների չափումը և դիտարկում է, թե ինչպես է հանձնառության իրականացման արդյունքում փոխվել կառավարության գործելակերպը:

Հաճախ ԲԿԳ հանձնառությունները անորոշ են ձևակերպված կամ հստակ չէ դրանց համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին, սակայն իրականում քաղաքականության զգալի բարեփոխումների են բերում: Երբեմն էլ զգալի առաջընթացի հասած հանձնառությունները կարող են համապատասխան և հավակնոտ թվալ, բայց չեն բերում բաց կառավարմանը: «Բերե՞լ է դա բաց կառավարմանը» փոփոխականը կոչված է հաշվի առնելու այս նրբությունները:

«Բերե՞լ է դա բաց կառավարմանը» փոփոխականը գնահատում է կառավարության գործելակերպի փոփոխությունը ըստ հետևյալ սանդղակի՝

- Վատթարացրել է՝ կառավարությունն ավելի փակ է դարձել ստանձնած հանձնառության արդյունքում:
- Չի փոխվել՝ կառավարության գործելակերպը չի փոխվել:
- Մարգինալ՝ կա որոշակի փոփոխություն, որը սակայն փոքր ազդեցություն ունի բաց կառավարման բարելավման առումով:
- Զգալի՝ քաղաքականության համապատասխան ոլորտում բաց կառավարման առաջընթաց կա, բայց այն սահմանափակ բնույթ է կրում իր շրջանակների կամ ծավալի տեսակետից:
- Ակնառու՝ բարեփոխումներ, որոնք քաղաքականության համապատասխան ոլորտում փոխակերպել են սովորական գործելակերպը՝ բերելով ավելի բաց կառավարմանը:

Այս փոփոխականը գնահատելու համար հետազոտողները սահմանում են ստատուս քվոն, որն առկա էր գործողությունների ծրագրի իրականացման սկզբում: Այնուհետև նրանք գնահատում են *փաստացի* արդյունքները, որոնք բերել են բաց կառավարման փոփոխությանը:

Զեկույցն ընթերցելիս պետք է հաշվի առնել առկա սահմանափակումները: ԱՀՄ ամփոփիչ զեկույցները պատրաստվում են ծրագրի իրականացման ավարտից ընդամենը մի քանի ամիս անց: Տվյալ փոփոխականն անդրադառնում է այն արդյունքներին, որոնք կարող են դիտարկվել բաց կառավարման պրակտիկայում՝ իրականացման երկամյա ժամկետի ավարտին: Թե՛ զեկույցը և թե՛ այս փոփոխականը չեն հավակնում ազդեցության գնահատում իրականացնել, քանի որ դա հնարավոր չէ՝ մեթոդաբանական բազմաթիվ հարցերի և զեկույցի սեղմ ժամանակահատվածի պատճառով:

---

[1] ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ, http://www.opengovpartnership.org/about/about-irm.

[2] Փորձագետների միջազգային խումբը 2015 թ. փոփոխել է այս չափանիշը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելի՛ր http://www.opengovpartnership.org/node/5919

Հանձնառությունների իրականացումը

Հանձնառությունների ամփոփ նկարագիր

ԲԿԳ մասնակից պետությունները պետք է հանձնառություններ ստանձնեն գործողությունների երկամյա ծրագրի շրջանակներում: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են ծրագրի ավարտին հանձնառությունների կատարման մակարդակը և «Բերե՞լ է դա բաց կառավարմանը» չափորոշիչի գնահատականը: Միջանկյալ փուլում ավարտված հանձնառությունների դեպքում կներկայացվեն միջանկյալ զեկույցի ամփոփ արդյունքները, իսկ հիմնական ուշադրությունը կսևեռվի «Բերե՞լ է դա բաց կառավարմանը» փոփոխականի վերլուծությանը: Այդ հանձնառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ծանոթանալ Հայաստանի 2016-2018 ԱՀՄ միջանկյալ զեկույցին:

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագիրը ներառում է ութ հանձնառություն, որոնք խմբավորվել են երեք թեմատիկ խմբերում՝ թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, տեղեկատվության մատչելիության խթանում և հանրային օրինավորության ամրապնդում: Այս հանձնառությունները վերաբերում են այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են պետական բյուջեն, տեղական ինքնակառավարումը, սոցիալական ծառայությունները, լիցենզավորումը և պետական պաշտոնյաների հաշվետվողականությունը: Այս զեկույցում հանձնառությունները ներկայացված են այնպիսի հաջորդականությամբ և նկարագրով, ինչպես սահմանված էր գործողությունների ծրագրի փաստաթղթում:

Աղյուսակ 4՝ Առաջընթացի գնահատում՝ ըստ հանձնառությունների

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարումը		Միջանկյալ / Ամփոփիչ		Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Շգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Շգալի	Ավարտված
1. Պաշտոնյաների գործունեությունների թափանցիկություն			✔		✔					✔					✔				✔		
															✔						
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն			✔		✔					✔				✔					✔		
														✔							

3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔			✔		✔				✔						✔	
																✔					
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔	✔	✔	✔		✔				✔					✔		
														✔							
5. Համայնքային որոշումների պորտալ			✔		✔			✔		✔				✔				✔			
														✔							
6. Լիցենզիաների գրանցամատյան		✔			Հստակ չէ					✔				✔				✔			
															✔						
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում			✔		✔	✔		✔			✔				✔				✔		
															✔						
8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում		✔			Հստակ չէ					✔			✔					✔			
													✔								

1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն

Հանձնառության ձևակերպումը

Անվանումը՝ Պատասխանատու գործուղում. Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

Կստեղծվի «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա՝ պաշտոնատար անձանց օտարերկրյա պետություն գործուղումների որոշումների և դրանց հաշվետվությունների հրապարակման միասնական հարթակ՝ որոնման հնարավորությամբ: Հիմնական նպատակն է՝ հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց գործուղելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացում, ՀՀ կառավարության գործունեության թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թույլտվությունների կարգը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. հունվար):*
2. *Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում (2017 թ. հունվար – 2017 թ. ապրիլ):*
3. *Հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց արտասահման գործուղումների որոշումների և հաշվետվությունների հրապարակման՝ օգտագործողի համար մատչելի միասնական տեղեկատվական հարթակի ստեղծում (2017 թ. մայիս – 2017 թ. հոկտեմբեր):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2017 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը	Համապատասխանություն-յունը ԲԿԳ արժեքներին	Պոտենցիալ ազդեցու-թյունը	Կատարման աստի-ճանը	Միջանկյալ Ամփոփիչ	Բերե՞լ է դա բաց կառավարմանը

	Առնա՝ է	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չնկատված	Որոշակի	Զգալի	Ամբողջական	Կատարելագործվել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Անհասանելի
1. Պաշտոնյաների գործողությունների թափանցիկություն			✔		✔					✔					✔				✔		
															✔						

Հանձնառության նպատակը

Հանձնառության նպատակն է առցանց հրապարակել պաշտոնյաների գործողությունների հաշվետվությունները: 2013 թվականին ՀՀ կառավարությունը սահմանել է արտասահմանյան գործողության թույլտվություն ստանալու և համապատասխան բովանդակային հաշվետվություններ ներկայացնելու ընթացակարգը[1]: Հանձնառությունն ընդունելու պահին հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և պաշտոնատար այլ անձանց՝ արտասահման գործուղման մեկնելու վերաբերյալ անհատական որոշումները տեղադրվում էին ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքում, սակայն արտասահմանյան գործուղումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները չեն հրապարակվել: Դա գործուղումների նպատակի և արդյունավետության վերաբերյալ ՁԼՄ-ների և հանրության տարատեսակ մեկնաբանությունների հիմք էր տալիս: Այս հանձնառությունը նախատեսում է ստեղծել մի հարթակ, որտեղ կհրապարակվեն պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները՝ հնարավորություն տալով հանրությանը տեղեկանալ գործուղումների նպատակների և արդյունքների վերաբերյալ, այդպիսով հիմնավորելով պետական միջոցների համապատասխան ծախսերը:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ նշանակալի

ՀՀ վարչապետի 2013 թ. թիվ 1087-Ն որոշման լրացում ընդունվեց[2], ըստ որի նախատեսվում է պաշտոնյաների հաշվետվությունների հրապարակումը դրանք ներկայացնելուց հետո մեկօրյա ժամկետում: Որոշումն ուժի մեջ է մտել 2017 թ. մայիսի 1-ին: Որոշման վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ էլեկտրոնային կամ դեմ առ դեմ քննարկումներ չեն կազմակերպվել: Սկսած 2017 թ. մայիսից, արտասահմանյան գործուղումների մասին հաշվետվությունները տեղադրված են www.e-gov.am կայքի «Գործուղումների հաշվետվություններ» բաժնում[3]: Սակայն հաշվետվությունները ներկայացված են միայն PDF ձևաչափով (յուրաքանչյուր կայքէջում՝ մոտ 20 հաշվետվության հղումների ցանկով) առանց որոնման հնարավորությունների, բացառությամբ հենց դիտարկչի հնարավորությունից:

Դիտարկչով որոնումը թույլ է տալիս տվյալ էջում գտնել զետեղված հաշվետվության հղումը ըստ պաշտոնյայի անվան, գործուղման ամսաթվի և վայրի: Հաշվետվություններից շատերը տեղադրված են սկանավորված ձևաչափով՝ պաշտոնյաների ստորագրությամբ: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[4]:

Ամփոփիչ՝ նշանակալի

Գործողությունների ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում այս հանձնառության շրջանակներում որևէ գործողություն չի իրականացվել և հարթակը նույն տեսքով է մնացել: Էլեկտրոնային կառավարման կայքի համապատասխան բաժնում շարունակվում է հաշվետվությունների հրապարակումը: 2018 թ. «Հելիքս Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից մշակվել է Էլեկտրոնային կառավարման նոր հարթակ, որը, ի թիվս այլ առանձահատկությունների, գործողումների հաշվետվությունների որոնման և զտման հնարավորություններ է ներառում ըստ պետական մարմնի, ամսաթվի և գործուղման վայրի[5]: Նոր հարթակի մեկնարկի ժամկետը դեռևս հայտնի չէ:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ մարգինալ

Հայաստանի օրենսդրությամբ պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները պարտադիր են եղել դեռևս 2013 թվականից, սակայն մինչ հանձնառության իրականացումը առցանց չեն հրապարակվել: Հաշվետվություններում բովանդակային տեղեկություններ են ներկայացվում ուղևորության վերաբերյալ, օրինակ՝ ուղևորության նպատակի, քննարկված թեմաների, ընդունված որոշումների մասին: Այնուամենայնիվ, հաշվետվությունները ուղևորության բյուջեի մասին տվյալներ չեն ներառում, որն, ըստ շահագրգիռ կողմերի, կբարելավեր պաշտոնյաների գործուղումների թափանցիկությունն ու թույլ կտար ավելի արդյունավետ հանրային վերահսկողություն իրականացնել պետական ծախսերի նկատմամբ[6]: Գործուղման բյուջեի ընդհանուր գումարը և ֆինանսավորման աղբյուրը նշված են վարչապետի որոշումներում, որոնք հասանելի էին նաև մինչև հանձնառության ստանձնումը:

Ինչպես արձանագրվել է ԱՀՄ միջանկյալ զեկույցում, շահագրգիռ կողմերը նշում են, որ www.e-gov.am կայքում հրապարակված հաշվետվությունները տվյալ գործադիր մարմնի առաջնահերթությունների և ծրագրերի համատեքստում համապարփակ տեղեկատվություն կամ արդյունքների համակարգված ամփոփում չեն ներկայացնում: Նման ամփոփումը հնարավորություն կտար ընդհանուր եզրակացություն տալ տվյալ ծրագրի կամ պետական մարմնի կատարողականության վերաբերյալ[7]: Եթե հարթակը ըստ պետական մարմնի որոնելու հնարավորություն ներառի, ապա այս վերլուծությունը գուցե հնարավոր լինի իրականացնել: Բացի այդ, հաշվետվություններն առցանց հրապարակելու և հանրության համար հասանելի լինելու փաստն ինքնին կարող է խթան հանդիսանալ պաշտոնյաների համար, որպեսզի նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ վերաբերվեն հաշվետվության կազմմանը և ավելի մանրակրկիտ կերպով պատրաստեն դրանք:

Ըստ «Հելիքս Քոնսալթինգի» տրամադրած տվյալների՝ «Գործուղումների հաշվետվություններ» կայքէջը 2018 թ. հունվարից հոկտեմբեր ամիսներին ունեցել է 4474 դիտում, որը հարթակի օգտագործման ցուցանիշի աճ է ցույց տալիս՝ ի տարբերություն 2017 թ. մայիս-հոկտեմբերի 2179 դիտումների[8]: Ընդհանուր առմամբ, այս հանձնառությունը նպաստել է տեղեկատվության մատչելիության բարելավմանը, քանի որ հանրությանը նոր տեղեկատվություն է տրամադրվել, սակայն քաղաքականության փոփոխության տեսանկյունից այն նշանակալի ազդեցություն չի ունեցել: Եթե գործարկվի որոնման հնարավորությամբ նոր հարթակը, իսկ տրամադրված տեղեկությունները ներառեն բյուջեի ծախսի վերաբերյալ տվյալներ, ապա այս հարթակն ավելի մեծ ներդրում կունենա գործուղումների

հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության գործում՝ տվյալների հասանելիության բարելավման և տեղեկատվության շրջանակների ընդլայնման շնորհիվ:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Չորրորդ ծրագրի շուրջ քննարկումների ընթացքում այս հանձնառության շարունակման վերաբերյալ առաջարկներ չեն եղել: Թեև որոնման հնարավորությունների բարելավման վերաբերյալ ԱՀՄ հետազոտողի առաջարկները հաշվի են առնվել էլեկտրոնային կառավարման նոր հարթակի մշակման ընթացքում, ԱՀՄ միջանկյալ զեկույցի որոշ առաջարկներ վերաբերում էին գործուղումների հաշվետվությունների բովանդակությանը: Պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունների հետ կապված տեղեկատվության մատչելիությունը բարելավելու համար զեկույցում մասնավորապես առաջարկվում էր հետևյալը՝

- հաշվետվությունների վերնագրերի և բովանդակության համար միատեսակ ձևաչափ սահմանել՝ ապահովելով, որ բոլոր հաշվետվությունները համապատասխանեն սահմանված կառուցվածքին,
- հաշվետվությունները տեղադրել համակարգչային ծրագրի համար ընթեռնելի ձևաչափով՝ ապահովելով մշակման ենթակա տվյալներ,
- հաշվետվություններում ներառել բյուջեի ընդհանուր գումարը և գործուղման ֆինանսավորման աղբյուրը և/կամ հղում տրամադրել համապատասխան որոշումներին և բյուջեի հաշվետվություններին՝ հնարավորություն տալով իրականացնել գործուղումների ծախսերի մոնիթորինգ և ծախսարդյունավետության գնահատում,
- ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրելու համար ներառել կից փաստաթղթեր կամ հղումներ, օրինակ, ստորագրված փաստաթղթեր, ելույթի տեքստեր, լուսանկարներ,
- հաշվետվության մեջ նշել համապատասխան պետական կառույցի այն ռազմավարական ուղղությունը և/կամ ծրագրային գերակայությունը, որից բխում է գործուղման նպատակը:

---

[1] ՀՀ վարչապետի 2013 թ. նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշումը «Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112868

[2] ՀՀ վարչապետի 2017 թ. ապրիլի 13-ի թիվ 367-Ն որոշումը «ՀՀ վարչապետի 2013 թ. նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112853

[3] ՀՀ էլեկտրոնային կառավարում, «Գործուղումների հաշվետվություններ» բաժին, https://www.e-gov.am/trips/

[4] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[5] Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 19; Էլեկտրոնային նամակագրություն Արամ Մխիթարյանի հետ («Հելիքս Քոնսալթինգ» ՍՊԸ), 2018 թ. սեպտեմբերի 27,

[6] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[7] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[8] Էլեկտրոնային նամակագրություն Արամ Մխիթարյանի հետ («Հելիքս Քոնսալթինգ» ՍՊԸ), 2018 թ. հոկտեմբերի 6

2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն

Հանձնառության ձևակերպումը
Անվանումը՝ Կառավարության դրամաշնորհների հաշվետվողականություն. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

Պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու մրցույթին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի, ինչպես նաև դրամաշնորհներով իրականացված ծրագրերի հաշվետվությունների հրապարակում համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքում: Հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների օգտագործման արդյունավետության բարձրացում, դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի և դրամաշնորհներով իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, դրամաշնորհների հասցեականության, ոլորտի հաշվետվողականության և թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Դրամաշնորհների տրամադրման կարգերը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. դեկտեմբեր):*
2. *Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում (2017 թ. հունվար – 2017 թ. մայիս):*
3. *Դրամաշնորհ ստացած կազմակերպությունների հաշվետությունների հրապարակում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում (սկսած 2017 թ. հունիսից):*
4. *ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մրցույթներին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի տեղադրում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում (սկսած 2017 թ. հունիսից):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2017 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը	Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Պոտենցիալ ազդեցությունը	Կատարման աստիճանը	Միջանկյալ / Ամփոփիչ	Բերե՞լ է դա բաց կառավարմանը

	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չնասված	Որոշակի	Զգալի	Ակարտակած	Կատարվել է	Չի փորվել	Մարգինալ	Զգալի	Անհայտ
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն			✔		✔					✔				✔					✔		
														✔							

Հանձնառության նպատակը

Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու պետական բյուջեից ֆինանսավորվող դրամաշնորհների թափանցիկությունը՝ պետական մարմինների կողմից դրամաշնորհ ստացած կազմակերպությունների ցանկը, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները հրապարակելու միջոցով: Հանձնառության իրականացման ակնկալվող արդյունքներն են՝ հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հաշվետվողականության բարելավում և հանրային վստահության բարձրացում:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ որոշակի

Հանձնառությունը որոշակի չափով էր կատարվել գործողությունների ծրագրի իրականացման առաջին տարվա ընթացքում: 2017 թ. հունիսի 1-ին ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 579-Ն որոշումը պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը սահմանող՝ ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: Ըստ այս լրացումների՝ դրամաշնորհ ստացած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են դրամաշնորհ տրամադրած պետական մարմնի պաշտոնական կայքում (դրամաշնորհի հատկացման պայմանագրի կնքումից հետո եռօրյա ժամկետում)[1]: Ըստ 2003 թ. ընդունված կարգի, կազմակերպությունը, որը դրամաշնորհ է ստացել, պայմանագրով նախատեսված ժամկետներում ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում: 2017 թ. ընդունված փոփոխության համաձայն, այս հաշվետվությունը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում պետք է հրապարակվի դրամաշնորհ տրամադրած պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում[2]: Նշված որոշման վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ էլեկտրոնային կամ դեմ առ դեմ քննարկումներ չեն կազմակերպվել:

Միջանկյալ զեկույցը գրելու պահին ԱՀՄ հետազոտողը որևէ նախարարության կայքում դրամաշնորհ ստացած կազմակերպությունների ցանկ չի գտել: Հարկ է նշել, որ հանձնառությունը վերաբերում է միայն մրցույթների միջոցով ստացած դրամաշնորհների ցանկին, մինչդեռ պետական դրամաշնորհների մեծ մասը տրվում են ոչ մրցութային կարգով՝ հիմնվելով «Բյուջեի մասին» օրենքի և այլ իրավական ակտերի կամ առանձին որոշումների վրա: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[3]:

Ամփոփիչ՝ որոշակի

Գործողությունների ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում դրամաշնորհներ տրամադրող նախարարություններից շատերը դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ են հրապարակել իրենց ինտերնետային կայքերում: Մասնավորապես դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ են հրապարակել ՀՀ մշակույթի նախարարությունը[4], ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը[5], ՀՀ կրթության և գիտության նախարարությունը[6] և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը[7]: Հաշվետվությունները տարբեր ձևաչափ և բովանդակություն ունեն՝ սկսած մեկ էջանոց սկանավորված փաստաթղթից, որտեղ մեկ աղյուսակում ծրագրի ընդհանուր բյուջեի գումարն է նշված, վերջացրած համապարփակ բովանդակային փաստաթղթով, որտեղ նկարագրված են ծրագրի նպատակները, գործողությունները և արդյունքները: Ի լրումն վերոնշյալի, ՀՀ առողջապահության նախարարությունը տարվա ընթացքում ֆինանսավորած դրամաշնորհների մասին ընդհանուր տեղեկատվություն է հրապարակում համալիր աղյուսակի տեսքով՝ ներառելով ստացող կազմակերպության անվանումը և հասցեն, բյուջեի հոդվածը, պայմանագրի ժամկետն ու գումարը, գնահատման չափանիշները և հաշվետվության կարգն ու ժամկետները[8]: Սակայն այս նախարարության կողմից ծրագրային հաշվետվություններ չեն հրապարակվում:

Ըստ 2017 թ. բյուջեի մասին օրենքի հավելվածի, որտեղ սահմանված է առանց մրցույթի տրամադրվող դրամաշնորհների ցանկը[9], պետական այլ մարմիններ ևս պետք է դրամաշնորհներ տրամադրեին 2017 թ. ընթացքում, օրինակ՝ ՀՀ կառավարության աշխատակազմը, ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ինչպես նաև այլ նախարարություններ և պետական գործակալություններ: Ընդհանուր առմամբ, այս ցանկում ներառված է 21 գերատեսչություն: Սակայն բացի վերոնշյալ հինգ նախարարություններից, մյուս պետական մարմինների ինտերնետային կայքերում ԱՀՄ հետազոտողը դրամաշնորհային ծրագրերի որևէ ցանկ կամ ծրագրային հաշվետվություն չի գտել:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ մարգինալ

Ըստ գործողությունների ծրագրի, այս հանձնառության նպատակն է պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի և դրամաշնորհներով իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարելավումը[10]: Սակայն հանձնառության իրականացման արդյունքում ոլորտի որոշ խնդիրներ են միայն հասցեագրվել, մասնավորապես դրամաշնորհների միջոցով իրականացված ծրագրերի վերաբերյալ

տեղեկատվության տրամադրումը, իսկ դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի և դրամաշնորհների օգտագործման արդյունավետության հետ կապված հարցերը բաց են մնացել: Ընդ որում, դրամաշնորհների միջոցով իրականացված ծրագրերի հաշվետվությունների տրամադրման շրջանակը սահմանափակ է, իսկ առկա հաշվետվությունների ձևաչափն ու որակը բարելավման կարիք ունեն: Հաշվի առնելով հանձնառության կատարման արդյունքները և այս հանձնառության հիմք հանդիսացող՝ պետական ֆինանսավորման ոլորտում թափանցիկության պակասի խնդիրը, կարելի է եզրակացնել, որ այս հանձնառությունը սահմանափակ առաջընթաց է արձանագրել պետության կողմից ֆինանսավորված դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության առումով:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Չորրորդ ծրագրի շուրջ քննարկումների ընթացքում ՔՀԿ-ներն առաջարկել են դրամաշնորհների բաշխման թափանցիկության վերաբերյալ հանձնառություն ստանձնել գործողությունների հաջորդ ծրագրում: Տվյալ հանձնառության շրջանակներում ԱՀՄ հետազոտողը առաջարկում է ձեռնարկել հետևյալ գործողությունները՝

- բոլոր պետական գերատեսչությունների կայքերում տեղեկություններ հրապարակել տրամադրված դրամաշնորհների մասին,
- դրամաշնորհների հաշվետվությունների փաստաթղթերի անվանման ու բովանդակության միասնական ստանդարտներ ընդունել,
- բարեփոխել դրամաշնորհների տրամադրման գործընթացը՝ դրամաշնորհների տրամադրման մրցութային և թափանցիկ մեխանիզմներ ապահովելով, հիմնավորելով նաև դրամաշնորհների կամ ծառայությունների պատվիրակման անհրաժեշտությունը,
- ընդլայնել պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասին հրապարակվող տեղեկատվության շրջանակները՝ հրապարակելով ոչ միայն դրամաշնորհներ, այլև պետական բյուջեից սուբսիդիաներ, նվիրատվություն, պետական աջակցություն և ֆինանսավորման այլ տեսակներ ստացող կազմակերպությունների ցանկը, ինչպես նաև համապատասխան ծրագրերի նկարագրական հաշվետվությունները:

---

[1] ՀՀ կառավարության թիվ 579-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման լրացում կատարելու մասին», 01.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113823

[2] ՀՀ կառավարության թիվ 579-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման լրացում կատարելու մասին», 01.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113823

[3] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[4] ՀՀ մշակույթի նախարարություն, Դրամաշնորհային ծրագրեր, http://mincult.am/grants-program.html

[5] ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Դրամաշնորհներ, http://minagro.am/դրամաշնորհներ

[6] ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ ԿԳՆ դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում կազմակերպությունների գործունեության 2017 թ. բովանդակային հաշվետվություններ, http://edu.am/index.php/am/documents/index/161

[7] ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հաշվետվություններ/վիճակագրություն, http://www.minsportyouth.am/category/hashvetvoutyounner.html

[8] ՀՀ առողջապահության նախարարություն, Դրամաշնորհներ և սուբսիդիաներ, http://www.moh.am/#1/990

[9] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին», հավելված 1, աղյուսակ 16 «Ցանկ «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի, որոնց գծով հատկացումների

գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվելու են դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի», http://www.arlis.am/Annexes/4/PT92.1_2016page925-950.pdf

[10] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության գործողությունների երրորդ ծրագիր (2016-2018թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ «Ավելի ինտերակտիվ բյուջե». Պետական բյուջեի թափանցիկության ապահովում՝ «բաց տվյալների» սկզբունքի կիրառմամբ:

ՀՀ քաղաքացիները հնարավորություն ունեն ՀՀ կառավարության և ՀՀ ֆինանսների նախարարության վեբ-կայքերում տեղադրված առցանց էլեկտրոնային ինտերակտիվ բյուջեի միջոցով տեղեկանալ ՀՀ պետական բյուջեի կառուցվածքին, ըստ գործառական դասակարգման՝ ծախսերի պլանավորված և փաստացի մեծություններին: Համակարգի թերությունը կայանում է նրանում, որ չնայած այն օգտագործողին տրամադրում է վերոնշյալ տեղեկատվությանը ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ, այն չի կառուցված «բաց տվյալների» սկզբունքների հիման վրա: Համակարգը օգտագործողին չի ընձեռում տեղեկատվությունը ներբեռնելու և այն՝ իր նպատակների համար մշակելու հնարավորություն: Էլեկտրոնային «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործումը հնարավորություն կտա բացի ծախսային մասից ինտերակտիվ եղանակով ցույց տալ բյուջեի ոչ միայն պլանավորված, այլ նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտները, համապատասխան կատարելագործված գործիքների կիրառմամբ հնարավոր դարձնել կոնկրետ տվյալների որոնումը (օրինակ բյուջեի ծախսերի բաշխումը ՀՀ պետական մարմինների ներսում և այլն), ինչպես նաև տեղեկատվությունը դարձնել մատչելի այն օգտագործողի կողմից հետագա մշակման համար (Machine readable)*: Այն կապահովի ՀՀ պետական բյուջեի մասին տեղեկատվության օգտագործման մատչելիությունը, կբարելավի ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի և հավաքագրված եկամուտների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:*

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Մասնավոր ընկերությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումներ՝ աշխատանքների շրջանակը հստակեցնելու նպատակով* (2016 *թ. հոկտեմբեր – 2017 թ. հունվար*)*:*
2. *Տեխնիկական առաջադրանքի մշակում և գնումների գործընթացի անցկացում* (2017 *թ. փետրվար - 2017 թ. հունիս*)*:*
3. *«Բաց տվյալների» սկզբունքի վրա հիմնված «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործում՝ նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտների ներկայացման հնարավորությամբ* (2017 *թ. հուլիս – 2018 թ. հունիս*)*:*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Սկիզբը՝ 2016 թ. դեկտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը	Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Պոտենցիալ ազդեցությունը	Կատարման աստիճանը	Միջանկ-յալ / Ամփոփիչ	Բերե՞լ է դա բաց կառավարմանը

	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չնկատված	Որոշակի	Զգալի	Ակնառուորեն	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Անհայտ
3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔			✔		✔				✔		✔				✔	

Հանձնառության նպատակը

Այս հանձնառությունը նախատեսում է բարելավել պլանավորված և փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող ինտերակտիվ բյուջեի հարթակը՝ որոնման և զտման հնարավորություններ և ներբեռնվող տվյալներ տրամադրելու միջոցով: Բացի այդ, նոր հարթակի միջոցով նախատեսվել է նաև տեղեկատվություն տրամադրել բյուջեի եկամուտների մասին: Հանձնառությունն ուղղված է ՀՀ պետական բյուջեի մասին տեղեկատվության մատչելիության և թափանցիկության բարելավմանը՝ եկամուտներն ու ծախսերը առցանց ձևաչափով և վերլուծության հնարավորությամբ ներկայացնելու միջոցով:

Մինչև հանձնառության ստանձնումը պետական բյուջեն և պլանավորված ու փաստացի ծախսերը հրապարակվում էին ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման[1] և ՀՀ ֆինանսների նախարարության[2] վեբ-կայքերում տեղադրված առցանց էլեկտրոնային «ինտերակտիվ բյուջե» հարթակի միջոցով: Դա մի վիզուալ գործիք է, որը տվյալներ է տրամադրում բյուջեի համապատասխան ծախսերի, իսկ որոշ դեպքերում՝ նաև գնումների պայմանագրերի մասին: Սակայն այդ տվյալները հասանելի չեն «բաց տվյալների» ձևաչափով: Ի տարբերություն դրա, ինտերակտիվ բյուջեի նոր հարթակը օգտվողներին հնարավորություն պետք է տա հեշտությամբ գտնել, ներբեռնել, մշակել և օգտագործել տվյալները, ինչպես նաև տեղեկություններ տրամադրի բյուջեի եկամուտների մասին՝ ըստ ձևավորման աղբյուրների:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ որոշակի

Ծրագրի իրականացման առաջին տարվա ավարտի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել էին հանձնառության առաջին երկու բաղադրիչները: Մասնավոր ընկերությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումները տեղի են ունեցել մինչև իրականացման փուլը, այսինքն՝ գործողությունների երրորդ ծրագրի մշակման ընթացքում, ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումների և հանձնառությունն առաջարկած ՔՀԿ-ի հետ քննարկումների

շրջանակներում[3]: Ծրագրի իրականացման առաջին տարվա ընթացքում նախարարությունը մշակել էր տեխնիկական առաջադրանքը և իրականացրել ծրագրային փաթեթի գնման գործընթացը: Արդյունքում 2017 թ. օգոստոսին պայմանագիր ստորագրվեց «ԼՍՈՖԹ» ՍՊԸ-ի հետ[4]: Ըստ պայմանագրին կցված տեխնիկական առաջադրանքի, աշխատանքների ավարտը նախատեսվում էր 2017 թ. դեկտեմբերի վերջին: Միջանկյալ զեկույցում ներառված ժամանակաշրջանից հետո՝ 2017 թ. հոկտեմբերի դրությամբ տեխնիկական աշխատանքների մեծ մասն արդեն իրականացվել էր կապալառուի կողմից: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[5]:

Ամփոփիչ՝ ավարտված

2017 թ. դեկտեմբերին հանձնառության պատասխանատու պաշտոնատար անձը քննարկում կազմակերպեց շահագրգիռ ՔՀԿ-ների և ընկերությունների հետ՝ ներկայացվող տեղեկատվության ձևաչափը բարելավելու նպատակով, և հնչած առաջարկները հաշվի առնվեցին հարթակը վերջնական տեսքի բերելիս: 2018 թ. մայիսի վերջին նախարարությունն ավարտեց թեստավորման և տվյալների ներածման գործընթացը և հարթակը ներկայացրեց ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաստատմանը՝ ըստ պետական էլեկտրոնային հարթակների համար ընդունված ընթացակարգի: Այնուամենայնիվ, անվտանգության ստուգումները պլանավորվածից ավելի երկար ժամանակ պահանջեցին, և հարթակը հասանելի դարձավ միայն 2018 թ. օգոստոսի վերջին:

Զեկույցը գրելու պահին (սեպտեմբեր 2018) հարթակը հասանելի էր ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքի «Պետական բյուջե» բաժնում: Այն հնարավորություն է տալիս մի քանի չափանիշներով որոնել և գտել բյուջեի տվյալները՝ ըստ գերատեսչության, ֆունկցիոնալ դասակարգման բաժնի, խմբի և դասի, ֆունկցիոնալ դասակարգման ծրագրի, տնտեսագիտական դասակարգման, ինչպես նաև համապատասխան պայմանագրերը դիտելու հնարավորություն է ընձեռում[6]: Որոնման արդյունքները կարելի է ներբեռնել Էքսել ձևաչափով: Նախկինում առկա «ինտերակտիվ բյուջե» հարթակի միջոցով տրամադրվող տեղեկատվությունից բացի, նոր հարթակը տրամադրում է նաև բոլոր ծախսերի հիմնավորող փաստաթղթերը և ներառում է «Ծրագրերի իրականացման գրասենյակների» (ԾԻԳ) ծախսերը: Ծախսերի և եկամուտների վերաբերյալ տվյալները թարմացվում են օրական կտրվածքով[7]: Բյուջեի եկամուտները ևս հասանելի են՝ ըստ գործակալության, բյուջեի բաժնի, խմբի և հաշվի որոնում կատարելու հնարավորությամբ: Բացի եկամուտներից և ծախսերից, կա նաև բյուջեի դեֆիցիտի էջ, որտեղ դեֆիցիտի աղբյուրներն ու հաշվարկները ներկայացված են աղյուսակի միջոցով՝ ներբեռնման հնարավորությամբ:

Ծախսերի բաժնում պայմանագրերը ներկայացված են PDF ձևաչափով: Ընդ որում, ԱՀՄ հետազոտողը նկատել է, որ «Պայմանագրեր» բաժնի ներքո գտնվող որոշ PDF փաստաթղթեր իրականում ոչ թե պայմանագրեր են, այլ համապատասխան վճարումները հիմնավորող հավաստագրեր (մեկ էջանոց փաստաթուղթ, որտեղ նշված է ստացողի անունը, բյուջեի տողը և գումարը) կամ ստորագրված հարկային հաշիվներ՝ հանձնման-ընդունման ակտերի հետ միասին[8]:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ զգալի

Թեև բյուջեի վերաբերյալ տեղեկատվությունը նախքան այս հանձնառության իրականացումը արդեն իսկ հրապարակվում էր տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ ինտերակտիվ բյուջեի գործիքի և եռամսյակային բյուջեի հաշվետվությունների միջոցով, հանձնառությունը զգալիորեն բարելավել է բյուջեի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև հանրության համար մատչելի տեղեկությունների շրջանակը: Ի տարբերություն առկա՝ գրաֆիկական ձևաչափով

ինտերակտիվ բյուջեի, նոր հարթակում տվյալները հասանելի են որոնման և զտման տարբերակների և ներբեռնելու հնարավորության միջոցով: Օրինակ, օգտվողները կարող են տեղեկատվություն ներբեռնել ըստ կոնկրետ պետական գերատեսչության և / կամ բյուջեի տողի (օրինակ՝ կրթություն, բնակարան, առողջություն) կամ համեմատել տարբեր պետական գերատեսչությունների պլանավորված և փաստացի ծախսերը՝ ըստ ծախսի տեսակի (ենթադրենք, հաղորդակցության ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, ապահովագրական ծախսերը): Որոշակի ֆունկցիոնալ դասի կամ ծրագրի ընտրության միջոցով կարելի է նաև ավելի մանրակրկիտ որոնում կատարել: Օրինակ, կրթության ոլորտն ուսումնասիրելիս օգտվողները կարող են ֆունկցիոնալ դասակարգման հատվածում ընտրել բարձրագույն կրթությունը, իսկ անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունեն ընտրել նաև տնտեսական դասակարգման հոդվածը, օրինակ՝ աշխատավարձերը, գործուղումների ծախսերը, նպաստները և այլն: Տեղեկատվության շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով գնման պայմանագրեր կամ այլ հիմնավորող փաստաթղթեր, ԾԻԳ-երի ծախսեր և արտաբյուջետային ծախսերը: Ի տարբերություն ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքի՝ էքսել ֆորմատով եռամսյակային բյուջեի հաշվետվությունների, նոր հարթակում տեղեկությունները թարմացվում են օրական կտրվածքով:

ԱՀՄ հետազոտողը կապ հաստատեց բյուջետային վերլուծության և հարկաբյուջետային թափանցիկության ոլորտում գործող ՔՀԿ-ների հետ, որոնց թվում էին նախնական խորհրդակցությունների և 2017 թ. հանդիպման մասնակից կազմակերպությունները: Նրանց մեծամասնությունը զեկույցը գրելու պահին տեղյակ չէր հարթակի մասին, սակայն շատերը հետաքրքրություն ցուցաբերեցին և գտան, որ հարթակը օգտակար կլինի իրենց աշխատանքի համար: Մասնավորապես, ըստ նրանց, հարթակը օգտակար կլինի տվյալ օրվա դրությամբ բյուջեի որոշակի տողով փաստացի ծախսերը ուսումնասիրելու գործում և կօգնի վերլուծել հանրային հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ծախսերը: Միևնույն ժամանակ, քանի որ հարթակի օգտագործման վերաբերյալ որևէ ուղեցույց կամ ուղղորդող տեսանյութ չկա, օգտվողները պետք է որոշակի նախնական պատկերացում ունենան բյուջեի կառուցվածքի մասին և մի քանի անգամ փորձարկեն հարթակը՝ հասկանալու համար, թե ինչպես կարելի է այն օգտագործել:

Պարտավորությունը նշանակալիորեն նպաստել է բյուջեի մասին մատչելի տեղեկատվության շրջանակի ու մեխանիզմների բարելավմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա իրազեկման միջոցառումներ իրականացնել և տեղեկատվությունը տարածել տարբեր խողովակներով՝ ապահովելու դրա օգտագործումը և ազդեցությունը թափանցիկության և հանրային վերահսկողության բարելավման տեսանկյունից:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր), Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացը դեռևս չէր ավարտվել: ԱՀՄ հետազոտողը կառավարությանն ու այլ շահագրգիռ կողմերին առաջարկում է հանրային իրազեկման միջոցառումներ իրականացնել՝ հարթակի օգտագործումն ապահովելու նպատակով, իսկ հարթակի կայքէջում հարթակի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն և օգտագործողի ուղեցույց տեղադրել:

---

[1] ՀՀ էլեկտրոնային կառավարում, «Ինտերակտիվ բյուջե» բաժին, https://www.e-gov.am/interactive-budget/

[2] ՀՀ ֆինանսների նախարարություն, «Ինտերակտիվ բյուջե» բաժին, http://minfin.am/en/page/interactive_budget/

[3] Ժիրայր Տիտիզյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 15

[4] Պետական գնման պայմանագիր No ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/5, 29.08.2017, https://www.e-gov.am/procur_files/40772838-pg.PDF

[5] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf
[6] ՀՀ ֆինանսների նախարարություն, Ինտերակտիվ բյուջե, http://budget.minfin.am:82/
[7] Ժիրայր Տիտիզյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 17
[8] Տե՛ս, օրինակ, «պայմանագրեր» բաժնում պատահական սկզբունքով գտած հավաստագրերի՝ http://budget.minfin.am:82/xml/storage/43263812-sca43.pdf, http://budget.minfin.am:82/xml/storage/42259239-13015.pdf, և հանձնման-ընդունման ակտի հղումներ՝ http://budget.minfin.am:82/xml/storage/43050172-sca55.pdf

4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ֆորմատի համապատասխանեցում «բաց տվյալների» սկզբունքին, դրանց վերամշակման, վերլուծության, որոնման համակարգի կատարելագործում:

Նախաձեռնության նպատակն է՝ քաղաքացիական հասարակության համար մատչելի ու հասանելի դարձնել օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացրած հայտարարատուների տվյալները, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ինտերակտիվ եղանակով համակարգից ստանալու հրապարակման ենթակա տվյալները էլեկտրոնային բաց ձևաչափով:

Ակնկալվում է քաղաքացիական հասարակության օժանդակությամբ ազդեցություն ունենալ հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման պարտականության կատարման գործընթացի վրա՝ բարելավելով ինչպես օրենքով սահմանված ժամկետում չներկայացված, այնպես էլ ուշ ներկայացված հայտարարագրերի վիճակագրությունը: Դրա հետ մեկտեղ, հայտարարագրերի ռեեստրի ինտերակտիվ գործիքի ներդրման արդյունքում Հանձնաժողովն ակնկալում է ՔՀ շահագրգիռ միավորումների կողմից ստանալու առավել փաստարկված առաջարկություններ ու դիմումներ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության սահմանափակումների կամ շահերի բախման իրավիճակների, կամ էլ էթիկայի կանոնների առերևույթ խախտումների կամ այդ կապակցությամբ արձանագրված ռիսկերի վերաբերյալ:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Շահագրգիռ քաղաքացիական միավորումներին հանձնառության առաջարկության ներկայացում, նրանց կարծիքների ստացում, քննարկումների կազմակերպում, արդյունքների ամփոփում՝ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացրած անձանց ցուցակների հրապարակման, Հանձնաժողովի կայքէջի «Հայտարարագրերի ռեեստր» բաժինը օգտվողների համար ինտերակտիվ դարձնելու ճանապարհով ծրագրային ապահովման մշակման վերաբերյալ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. դեկտեմբեր):*
2. *2016 թ. հայտարարագիր չներկայացրած և սահմանված ժամկետից ուշ ներկայացրած անձանց ցուցակների հրապարակում Հանձնաժողովի կայքում (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*
3. *Հանձնաժողովի* www.ethics.am *կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնողական համակարգի զարգացում, դրա՝ օգտվողի համար ինտերակտիվ հասանելիության ապահովում, ծրագրային ապահովման մշակում և ներդնում (2017 թ. մարտ – 2018 թ. հունիս):*

Խմբագրական՝ Թեև գործողությունների ծրագրում երեք բաղադրիչ է նշված, ԱՀՄ հետազոտողն առանձնացրել է այս հանձնառության երկու արդյունք՝ հայտարարագրերը ժամանակին չներկայացրած պաշտոնյաների ցուցակի հրապարակումը և բաց տվյալների ձևաչափով որոնման համակարգի ստեղծումը:

Պատասխանատու կառույց՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. Հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարման աստիճանը		Միջանկյալ / Ամփոփիչ		Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Կասեցվել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Անհայտ
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔	✔	✔	✔		✔				✔ ✔					✔		

Հանձնառության նպատակը

Ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, բարձրաստիճան պաշտոնատար անձինք պետք է գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնեն յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաջորդ տարվա մարտի 30-ը, ինչպես նաև պաշտոնի ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ՝ այդ օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում[1]: 2012 թվականից սկսած բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը հրապարակվում են PDF ձևաչափով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) www.ethics.am կայքում: Սակայն հնարավոր չէ տեղեկություններ փնտրել և գտել ըստ հայտարարագրի որևէ տվյալի՝ պաշտոնյայի անունից, պաշտոնից և հայտարարագրման տարուց զատ (օրինակ, ըստ եկամտի կամ գույքի): Բացի այդ, հայտարարագրերի ռեեստրում հրապարակման ձևաչափը թույլ չի տալիս վերլուծել տվյալների դինամիկան ըստ տարիների:

Հանձնառության նպատակն է՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերը հրապարակել «բաց տվյալների» ձևաչափով (այսինքն՝ PDF-ի փոխարեն ներբեռնվող և որոնման ենթակա տվյալներ տրամադրելով), ինչպես նաև

հրապարակել այն անձանց ցուցակները, որոնք օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չեն ներկայացրել: Բացի այդ, հանձնառությունը ներառում է քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցություն ցուցակի հրապարակման և ծրագրային փաթեթի մշակման հարցերի շուրջ: Հանձնառության կատարումը հնարավորություն կտա հետաքննող լրագրողներին և քաղաքացիական հասարակությանը փաստերի ուսումնասիրման և ազդարարման միջոցով օգնել ստուգելու պաշտոնյաների հայտարարագրած տվյալների հավաստիությունը:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ որոշակի

Հանձնառությունը որոշակի չափով է կատարվել իրականացման առաջին տարվա ընթացքում: Հանձնաժողովը քննարկումներ է անցկացրել քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչների, այդ թվում՝ հակակոռուպցիոն և թափանցիկության ոլորտում աշխատող ՔՀԿ-ների և հետաքննող լրագրողների հետ՝ տարբեր հանդիպումների, միջոցառումների և անհատական խոսակցությունների միջոցով:

Հանձնառության իրականացման համար նախատեսված միջոցները նախատեսվել էին Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» (2016-2020 թթ.) շրջանակներում: Ինչպես նշել էր հանձնաժողովի՝ հանձնառության համար պատասխանատու ներկայացուցիչը, որոնողական համակարգի արդիականացումը հետաձգվեց՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով, որոնք ուժի մեջ մտան 2017 թ. հուլիսին: 2017 թ. հոկտեմբերի դրությամբ հանձնաժողովը մշակել էր հանձնաժողովի կայքի «Հայտարարագրերի ռեեստրի» բաժնի էլեկտրոնային համակարգի արդիականացման ծրագրային փաթեթի տեխնիկական առաջադրանքը[2]:

Սահմանված ժամկետում հայտարարագրեր չներկայացրած պաշտոնյաների ցանկի հրապարակումը նախատեսված էր իրականացնել մինչև 2017 թ. մարտը ներառյալ, սակայն նշված ցանկը գործողությունների ծրագրի առաջին տարվա ընթացքում չի հրապարակվել: Այն հրապարակվեց 2017 թ. հոկտեմբերի 30-ին՝ ներկայացնելով այն պաշտոնյաների անունները և պաշտոնները, որոնք այդ օրվա դրությամբ 2016 թ. եկամուտների և գույքի վերաբերյալ հայտարարագրեր չէին ներկայացրել[3]: Հրապարակված ցուցակում հայտարարագրերն ուշացումով ներկայացրած պաշտոնյաների վերաբերյալ տեղեկություններ չկային: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[4]:

Ամփոփիչ՝ որոշակի

2018 թ. մայիսին հանձնաժողովը հրապարակեց այն պաշտոնյաների ցանկը, որոնք եկամուտների և գույքի վերաբերյալ տարեկան հայտարարագրեր չէին ներկայացրել կամ ուշացումով էին ներկայացրել իրենց հայտարարագրերը[5]: Այնուհետև հանձնաժողովը հրապարակեց այն պաշտոնյաների ցանկը, որոնք չէին ներկայացրել եկամուտների և գույքի՝ պաշտոնը ստանձնելու հայտարարագրեր[6]: Այսպիսով, հանձնառության մեկ բաղադրիչն իրականացվել է: Հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակել նաև հարուցված վարչական գործերի և պաշտոնյաների նկատմամբ կիրառված տույժերի քանակի մասին[7]:

Հանձնառության երկրորդ բաղադրիչը՝ հանձնաժողովի կայքում հայտարարագրերի որոնման համակարգի ստեղծումը և հայտարարագրերի տրամադրումը բաց տվյալների ձևաչափով, չի կատարվել: Ըստ կառավարության աշխատակազմի, այս գործողության իրականացումը ձգձգվել է ֆինանսավորման ուշացման պատճառով, որը նախատեսված էր Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող՝ «Հայաստանի պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» (2016-2020 թթ.)

շրջանակներում[8]: Այնուհետև, հանձնաժողովը առաջարկել է հետաձգել այս բաղադրիչը՝ ներկայիս հանձնաժողովի ակնկալվող լուծարման և կոռուպցիայի կանխարգելման նոր հանձնաժողով ստեղծելու կապակցությամբ[9]: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը, որն ընդունվել է 2017 թ. հունիսին, նախատեսում է գործառույթների և լիազորությունների ավելի լայն շրջանակով հանձնաժողով ստեղծել: Այն փոխարինելու է Բարձրագույն պաշտոնատար անձանց էթիկայի հարցերով հանձնաժողովին 2018 թ. ապրիլից հետո, երբ Սահմանադրական փոփոխությունները ամբողջությամբ ուժի մեջ կմտնեն[10]: Սակայն գործողությունների ծրագրի իրականացման ժամկետի ավարտին նոր հանձնաժողովը դեռևս չէր ձևավորվել: Ըստ այդմ, հանձնառության պատասխանատու հանձնաժողովը առաջարկել է այս հանձնառությունը շարունակել գործողությունների հաջորդ ծրագրում:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ մարգինալ
Հանրային մասնակցություն՝ չի փոխվել
Հանրության առջև հաշվետվողականություն՝ չի փոխվել

Հանձնառության իրականացմանը զուգահեռ՝ պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերաբերյալ մի շարք օրենսդրական փոփոխություններ են ընդունվել: 2017 թ. հունիսի 9-ին խորհրդարանը փոփոխություններ և լրացումներ ընդունեց «Հանրային ծառայության մասին» օրենքում (ինչպես նաև մի շարք այլ առնչվող օրենքներ), որոնք ուժի մեջ մտան 2017 թ. հուլիսի 1-ից: Ըստ այդ փոփոխությունների՝ վարչական պատասխանատվություն է սահմանվել հայտարարագրերը ժամանակին չներկայացնելու և հայտարարագրերի ներկայացման պահանջներն ու կարգը խախտելու, ինչպես նաև անփութության հետևանքով սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար: Հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար սահմանվել է քրեական պատասխանատվություն[11]: Այս օրենսդրական փոփոխությունները թույլ են տվել Բարձրագույն պաշտոնատար անձանց էթիկայի հարցերով հանձնաժողովին լրացուցիչ աշխատակազմ ունենալ և ընդլայնել իրենց լիազորությունները, այդ թվում՝ հայտարարագրերում առկա տեղեկատվության ստուգումը և վարչական վարույթի հարուցում օրենքի դրույթները չիրականացնող պաշտոնյաների նկատմամբ: Թեև այս փոփոխությունները կատարվել են հանձնառության շրջանակից դուրս, դրանք կարևոր դեր են ունեցել հանրության առջև պաշտոնյաների հաշվետվողականության բարելավման տեսանկյունից: Հայտարարագրերը ժամանակին չներկայացրածների ցանկի հրապարակումը կարող է որոշակի ազդեցություն ունենալ օրինախախտ պաշտոնյաների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության տեսանկյունից, քանի որ այն ամփոփ տեղեկատվություն է տրամադրում, որը հակառակ դեպքում հնարավոր կլիներ բացահայտել միայն հանձնաժողովի կայքում առկա բոլոր հայտարարագրերը մանրամասն ուսումնասիրելու և դրանց շարքում բացակայող պաշտոնյաներին գտնելու միջոցով:

Թեև հանձնառությունը ներառում էր շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ՝ որպես «բաց տվյալների» հարթակի ստեղծման առաջին քայլ, այն նոր հնարավորություններ կամ կարողություններ չի ստեղծել կառավարության որոշումների վրա հանրության ազդեցության տեսանկյունից, քանի որ որոնման համակարգը չի ստեղծվել, ուստի քաղաքացիական մասնակցության մակարդակը չի փոխվել:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր), Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի

հանձնաժողովն առաջարկել է հայտարարագրերի որոնողական համակարգի ստեղծման բաղադրիչն ընդգրկել գործողությունների հաջորդ ծրագրում:

---

[1] ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», 26.05.2011, հոդված 33, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121573

[2] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 24

[3] Հանձնաժողովը հրապարակում է 2016թ. պաշտոնի ստանձնման և տարեկան, 2017թ. պաշտոնի ստանձնման և դադարեցման հայտարարագրեր չներկայացրած հայտարարատու պաշտոնատար անձանց ցուցակ, 30.10.2017, http://ethics.am/hy/news/item/2017/10/30/news63/

[4] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[5] Հրապարակվում է 2017 թվականի տարեկան հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկը, 24.05.2018, http://ethics.am/hy/news/item/2018/05/24/news107/; Հրապարակվում է 2017 թ. հուլիսի 1-ից 2018 թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում պաշտոնը ստանձնելու հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացրած պաշտոնատար անձանց ցանկը, 18.05.2018, http://ethics.am/hy/news/item/2018/05/18/news106/

[6] Հրապարակվում է 2018 թվականի հուլիսի 24-ի դրությամբ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագրերը չներկայացրած պաշտոնատար անձանց ցանկը, 25.07.2018, http://ethics.am/hy/news/item/2018/07/25/news115/

[7] Հանձնաժողովը կայացրել է վարչական տույժ կիրառելու մասին 100 որոշում, 31.05.2018, http://ethics.am/hy/news/item/2018/05/31/news108/

[8] Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 19

[9] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 3

[10] ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», 09.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114355

[11] ՀՀ օրենքը ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 09.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114359

5. Համայնքային որոշումների պորտալ

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ Համայնքային որոշումների պորտալ. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում:

«Բաց տվյալների» սկզբունքի հիման վրա համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում: Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, փնտրելու հնարավորության ստեղծում (պարզ և ընդլայնված որոնում), օգտագործման մատչելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:

Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների՝ «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա հրապարակումը տեղեկատվության հասանելիության առումով նոր որակ է հաղորդում հանրային հաշվետվողականության արժեքի ներդրման և հետևողական զարգացման հարցում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում վերաբերյալ հնարավոր տեխնիկական լուծումների քննարկում քաղհասարակության և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. նոյեմբեր):*
2. *Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում՝ որոնման հնարավորությամբ (2016 թ. դեկտեմբեր – 2018 թ. հունիս):*
3. *Համայնքային ծառայողների ուսուցման կազմակերպում և անցկացում (2017 թ. հուլիս – 2017 թ. դեկտեմբեր):*
4. *Նախկինում ընդունված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների արխիվային բազայի ստեղծում (սկսած 2018 թ. հունվարից):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ մարզպետարաններ

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը	Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Պոտենցիալ ազդեցությունը	Կատարման աստիճանը	Միջանկյալ / Ամփոփիչ	Բերե՞լ է դա բաց կառավարմանը

	Առնա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Կատարվել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Աննառու
5. Համայն-քային որոշումների պորտալ			✔		✔			✔		✔				✔				✔			
														✔							

Հանձնառության նպատակը

Մինչ հանձնառությունը ստանձնելը տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), այն է՝ համայնքների ավագանու և ղեկավարի որոշումները էլեկտրոնային տարբերակով PDF ձևաչափով հրապարակվում էին տարբեր պաշտոնական կայքերում, մասնավորապես, համայնքների (առկայության դեպքում) և համապատասխան մարզպետարանների կայքերում: Հայաստանում, սակայն, չկա համայնքային որոշումների հրապարակման միասնական հարթակ, որտեղ օգտվողները կարողանան հեշտությամբ գտնել անհրաժեշտ իրավական ակտերը: Միաժամանակ, պետական մարմինների ընդունած իրավական ակտերի հրապարակման համար օգտագործվում է «Հայաստանյան իրավական տեղեկատվական համակարգ» (ARLIS) առցանց հարթակը, որն իրավական ակտերը տարբեր չափանիշներով որոնելու և ներբեռնելու հնարավորություններ է տրամադրում[1]: Այս հանձնառությունը նախատեսում է ստեղծել առցանց հարթակ, որը որպես միասնական տեղեկատվական համակարգ կծառայի համայնքային որոշումների, մասնավորապես համայնքների ավագանու և ղեկավարի որոշումների հրապարակման համար:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ որոշակի

2016 թ. հուլիսին www.arlis.am կայքում ավելացվեց նոր՝ «ՏԻՄ ակտեր» բաժինը, որտեղ PDF ձևաչափով եռամսյակային տեղեկագրերում հրապարակվեցին համայնքների ավագանիների և ղեկավարների որոշումները[2]: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, հաշվի են առնվել ARLIS համակարգի տեխնիկական կարողությունները և նպատակահարմար է համարվել համայնքային որոշումները հրապարակել պետական մարմինների ընդունած իրավական ակտերի հետ նույն հարթակում[3]: ARLIS կայքի կառավարումն իրականացվում է պետությանը պատկանող «Պաշտոնական տեղեկագրեր» ՓԲԸ կողմից, որը հրապարակում է իրավական տեղեկագրերը: Այսպիսով, կարիք չի եղել համայնքային ծառայողների համար որևէ դասընթաց իրականացնել, քանի որ վերջիններս հարթակում որոշումների հրապարակման գործընթացին անմիջականորեն չեն մասնակցում:

Միևնույն ժամանակ, հրապարակված որոշումների ձևաչափը թույլ չի տալիս օգտվողին հեշտությամբ որոնել և գտնել որևէ տեղեկություն՝ հաշվի առնելով համակարգչային ծրագրով PDF փաստաթղթի անընթեռնելիությունը և մեծ ծավալի պատճառով տեղեկագրերի ներբեռնման ցածր արագությունը: Հարթակում տեղադրված է

համայնքային որոշումների ցանկը, որտեղ ներկայացված իրավական ակտերի անվանումները ներառում են համայնքի անվանումը, որոշման համարը և ընդունման ամսաթիվը, հաճախ նաև՝ թեման: Սա հնարավորություն է տալիս օգտագործել դիտարկչի որոնման համակարգը՝ ցանկում որևէ որոշում փնտրելու և ըստ համապատասխան էջի PDF տեղեկագրում համապատասխան իրավական ակտը գտնելու համար: Այնուամենայնիվ, եթե փնտրվող որոշումն ընդունելու ժամանակաշրջանը հայտնի չէ, հարկավոր կլինի այն փնտրել բոլոր տեղեկագրերում: Բացի այդ, մարզպետարանների կայքերում հրապարակված որոշումների մեծ մասը տեղեկագրերում չի ներառված: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[4]:

Ամփոփիչ՝ որոշակի

Գործողությունների ծրագրի երկրորդ տարվա ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից այս հանձնառության շրջանակներում որևէ լրացուցիչ գործողություն չի իրականացվել: 2018 թ. հրապարակված եռամսյակային տեղեկագրի[5] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզպետարանների կայքերում առկա բազմաթիվ համայնքային որոշումներ դեռևս ընդգրկված չեն, իսկ համակարգչային ծրագրով փաստաթղթի ընթեռնելիությունը չի ապահովվել: Ըստ կառավարության աշխատակազմի տրամադրած տեղեկատվության, նախատեսվում է բարելավել www.arlis.am պորտալի տեխնիկական հնարավորությունները, որի շնորհիվ հնարավոր կլինի բարելավել նաև հարթակի որոնման հնարավորությունները[6]:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել

ԱՀՄ հետազոտողը գտնում է, որ առկա հարթակը չի նպաստել տեղեկատվության ծավալի կամ որակի բարելավմանը: Նախ, ARLIS հարթակի «ՏԻՄ որոշումներ» բաժնում որոնման և տեղեկատվության մշակման հնարավորությունը սահմանափակ է, ապա, համայնքային որոշումների տեղեկագրերի ներբեռնումն ու օգտագործումը դժվարություններ է առաջացնում, իսկ տեղեկագրում ընդգրկված համայնքային որոշումների ցանկը թերի է: Այս կարծիքը հիմնված է նաև քաղաքացիական հասարակության հետ քննարկումների վրա, որոնք իրականացվել են Հայաստանի 2016-2017թթ. ԱՀՄ միջանկյալ զեկույցի մշակման ընթացքում:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումների ընթացքում հանձնառությունը շարունակելու առաջարկ չի եղել: Հանձնառության կատարումը բարելավելու համար ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հետևյալ քայլերը, որոնք թվարկվել են Հայաստանի 2016-2017թթ. ԱՀՄ միջանկյալ զեկույցում՝

- ապահովել, որ հարթակում (տեղեկագրում) ներառվեն Հայաստանի բոլոր համայնքների բոլոր որոշումները,
- որոշումները հրապարակել համակարգչային ծրագրով ընթեռնելի ձևաչափով՝ ապահովելով մշակման ենթակա տվյալներ,
- հնարավորության դեպքում բարելավել հարթակը, որպեսզի այն համապատասխանի հանձնառության տեքստին՝ մասնավորապես պարզ և ընդլայնված որոնման հնարավորություններ տրամադրելով,
- ավելի հարմարավետ դարձնել տեղեկագրի ընթերցումը կայքից (օրինակ, ամբողջական էկրանով դիտելու հնարավորություն տրամադրել):

[1] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, http://www.arlis.am

[2] Սուսաննա Գրիգորյան («Պաշտոնական տեղեկագրեր» ՓԲԸ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 17
[3] Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 16
[4] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf
[5] Համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու, No 1(60), 2018 թ. մարտի 30, http://www.arlis.am/VL/Downloads/2018/2018-1-1.pdf
[6] Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 19

6. Լիցենզիաների գրանցամատյան

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ Հաշվետու լիցենզավորում. Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում

Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում և տրամադրված լիցենզիաների թվայնացում: Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծումը կնպաստի լիցենզիաների տրամադրման գործընթացի, ծանուցման ենթակա գործունեության տեսակների վարչարարության առավել պարզեցմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն (2016 թ. օգոստոս – 2016 թ. հոկտեմբեր):*
2. *Իրականացնել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների մշակում (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. նոյեմբեր):*
3. *Մշակել պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյան, համակարգչային ծրագիր (software) և ստեղծել էլեկտրոնային կայք (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. մարտ):*
4. *Թվայնացնել նախկինում պետական մարմինների կողմից տրամադրված բոլոր լիցենզիաները և դրանք ներառել միասնական էլեկտրոնային գրանցամատյանում (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*
5. *Համակցել էլեկտրոնային գրանցամատյանը այլ պետական էլեկտրոնային գրանցամատյաններին, օրինակ՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բազայի հետ (e-register) (2017 թ. մարտ – 2017 թ. ապրիլ):*
6. *Կազմակերպել լիցենզիա տրամադրող պետական մարմինների ներկայացուցիչների համար էլեկտրոնային միասնական գրանցամատյանի վարման առանձնահատկությունների վերաբերյալ համապատասխան դասընթացներ (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. օգոստոս **Ավարտը՝** 2017 թ. ապրիլ

Հանձնառությունը	Կոնկրետությունը	Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Պոտենցիալ ազդեցությունը	Կատարման աստիճանը	Միջանկ-յալ / Ամփոփիչ	Բերե՞լ է դա բաց կառավարմանը

	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Աննառու
6. Լիցեն-զիաների գրանցա-մատյան			✔		Հստակ չէ					✔				✔	✔			✔			

Հանձնառության նպատակը

Մինչ հանձնառությունը ստանձնելը, ՀՀ պետական մարմինների տրամադրած լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ միասնական գրանցամատյան չկար[1]: Լիցենզիայի կամ ծանուցման առկայության կամ բացակայության մասին տեղեկությունները կամ դրանց իսկությունը հնարավոր էր ստուգել միայն թղթային եղանակով: Գործունեության որոշ ոլորտներում լիցենզավորված կազմակերպությունների ցուցակները տեղադրվում էին համապատասխան լիցենզիան տրամադրող լիազոր մարմինների կայքերում, սակայն այդ ցուցակների ընդհանուր ձևաչափ և հրապարակման պահանջ չկար:

Ըստ հանձնառության, լիցենզիաների պետական միասնական էլեկտրոնային համակարգի առկայության պարագայում ստուգող կողմը կարող է միայն լիցենզիայի համարը և ամսաթիվը մուտքագրելով՝ ստուգել լիցենզիայի առկայության և դրա վավերականության մասին տեղեկատվությունը[2]: Սակայն հանձնառության տեքստում չի նշվում, որ միասնական էլեկտրոնային գրանցամատյանը մատչելի կլինի հանրության համար, ուստի դրա համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ որոշակի

2016 թ. վերջին եռամսյակում ՀՀ արդարադատության նախարարությունը «Ներդաշնակ զարգացում» ՀԿ-ի համագործակցությամբ իրականացրեց հանձնառության առաջին գործողությունը՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը: Այնուհետև 2017 թ. առաջին կեսին մշակվեց գրանցամատյանի տեխնիկական առաջադրանքը: Զուգահեռաբար մշակվել և 2017 թ. մայիսի ընթացքում պետական մարմիններում շրջանառվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների նախագիծը[3]: Մասնավորապես, «Լիցենզավորման մասին» օրենքի փոփոխություններում ներկայացվել է լիցենզիաների էլեկտրոնային միասնական գրանցամատյանի հասկացությունը, այդ գրանցամատյանում ներառվող տեղեկությունների նկարագիրը, դրանք անվճար տրամադրելու կարգը և պետական տուրքի առավելագույն չափը[4]:

Օրենքի փոփոխությունների նախագիծը խորհրդարանում ընդունվեց 2017 թ. հոկտեմբերի 25-ին և ուժի մեջ մտավ 2018 թ. մայիսի 15-ից: Ըստ «Լիցենզավորման մասին» փոփոխված օրենքի՝ էլեկտրոնային գրանցամատյանում նշվում են լիցենզիա ունեցող իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ ազգանունը, անունը, բնակության վայրը և հաշվառման հասցեն, լիցենզիայի սերիան և համարը, լիցենզիա տալու ամսաթիվը և գրանցման համարը, գործունեության այն տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա, գործունեությունն իրականացնելու հասցեն, գործողության ժամկետը և օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

Ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի փոփոխությունների, էլեկտրոնային գրանցամատյանում լիցենզիաների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման, վավերականության ստուգման կարգը և էլեկտրոնային գրանցամատյանից անվճար օգտվող պետական մարմինների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Միևնույն ժամանակ, օրենքում նշվում է, որ էլեկտրոնային գրանցամատյանում պահվող տեղեկությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց կարող են տրամադրվել առցանց՝ ՀՀ կառավարության սահմանած վճարի դիմաց, բայց անվճար կլինեն լիցենզիա ունեցող անձանց համար՝ իրենց վերաբերյալ տեղեկությունների մասով[5]: 2017 թ. նոյեմբերի դրությամբ ծրագրային փաթեթը մշակող կապալառուն՝ VX-Soft ընկերությունը մշակել էր ծրագրային փաթեթի նախագիծը և այն փորձարկել մի քանի պետական կառույցներում: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[6]:

Ամփոփիչ՝ զգալի

2018 թվականի ընթացքում VX-Soft ընկերությունը փորձարկել է լիցենզիաների գրանցամատյանի ծրագրային փաթեթը պետական գերատեսչությունների մեծամասնությունում և դասընթացներ է իրականացրել պատասխանատու պաշտոնյաների համար, որոնք սկսել են մուտքագրել լիցենզիաների վերաբերյալ համապատասխան գերատեսչություններում առկա տվյալները[7]: Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) փորձարկման գործընթացը շարունակվում էր (երկու-երեք գերատեսչություն էր մնում), իսկ հարթակը դեռևս հասանելի չէր առցանց: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչի, ուշացման հիմնական պատճառները տեղեկատվության ահռելի ծավալն էր և համակարգում դրա ներմուծման աշխատատարությունը[8]:

2018 թ. օգոստոսին ՀՀ կառավարությունն ընդունեց լիցենզիաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ու վավերականության ստուգման կարգը և գրանցամատյանից անվճար օգտվող պետական մարմինների ցանկը[9]: Որոշումն ուժի մեջ կմտնի 2018 թ. դեկտեմբերին: Որոշման հավելվածում սահմանվել է գրանցամատյանում տեղեկությունների հրապարակման ընթացակարգը, ըստ որի գրանցամատյանում անվճար հրապարակվում են լիցենզիայի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը, բնակության վայրը,
2) գործունեության այն տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա,
3) լիցենզիայի գործողության ժամկետը,
4) լիցենզիայի առկա կարգավիճակը:

Գրանցամատյանում առկա այլ տեղեկություններ ստանալու նպատակով օգտվողները պետք է գրանցվեն և վճարում կատարեն[10]:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել

Քանի որ զեկույցը գրելու պահին լիցենզավորման գրանցամատյանի առցանց հարթակը հասանելի չէր, տեղեկատվության մատչելիության բարելավում չի արձանագրվել: Այնուամենայնիվ, ելնելով կառավարության որոշմամբ որպես անվճար սահմանված տեղեկատվության շրջանակներից՝ կարելի է ակնկալել, որ լիցենզավորման գրանցամատյանի առցանց հրապարակումը կնպաստի հանրությանը հասանելի դարձած տեղեկությունների ծավալի զգալի բարելավմանը:

Թեև որոշ գերատեսչություններ լիցենզիաների մասին կցկտուր տեղեկատվություն են տրամադրում, միասնական գրանցամատյանը, որտեղ տեղեկություններ կներառվեն Հայաստանում առկա բոլոր լիցենզիաների վերաբերյալ՝ մատչելի ձևաչափով և որոնման մեխանիզմով, կարող է հանրությանը հնարավորություն տալ ստուգելու լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնողներին: Դա թույլ կտա նրանց պարզել կոնկրետ լիցենզիայի առկայությունը և կարգավիճակը: Բացի այդ, հարթակը կարող է օգնել հանրային վերահսկողություն ապահովել համապատասխան պետական մարմինների կողմից լիցենզիայի տրամադրման պայմանների նկատմամբ:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր), Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումների ընթացքում այս հանձնառությունը շարունակելու առաջարկ չի եղել:

---

[1] Ծանուցման ենթակա գործունեությունը կարգավորվում է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և ներառում է գործունեության այնպիսի տեսակներ, որոնց համար լիցենզավորում չի պահանջվում, սակայն անհրաժեշտ է համապատասխան ծանուցում ուղարկել պետական մարմիններին (օրինակ՝ որևէ ապրանքի արտադրության և/կամ վաճառքի դեպքում, այդ թվում՝ գինու, գարեջրի, անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների և այլն):

[2] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության գործողությունների երրորդ ծրագիր (2016-2018թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

[3] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[4] ՀՀ օրենքը ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 161-Ն, 25.10.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117125

[5] ՀՀ օրենքը ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 161-Ն, 25.10.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117125

[6] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[7] Աննա Հարությունյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 4

[8] Աննա Հարությունյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 4

[9] ՀՀ կառավարության թիվ 866-Ն որոշումը «Լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանում լիցենզիաների տրամադրման մասին որոշումների գրանցման, ինքնաշխատ կերպով լիցենզիայի սերիայի և համարի տրամադրման, հրապարակման, լիցենզիաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ու վավերականության ստուգման կարգը, գրանցամատյանից անվճար օգտվող պետական մարմինների ցանկը և այլ անձանց վերաբերյալ գրանցամատյանում պահվող տեղեկություններն առցանց տրամադրելու վճարի չափը սահմանելու, ինչպես նաև գրանցամատյանի վարման ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմին ճանաչելու մասին», 02.08.2018, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124424

[10] Լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանում լիցենզիաների տրամադրման մասին որոշումների գրանցման, ինքնաշխատ կերպով լիցենզիայի սերիայի և համարի տրամադրման, հրապարակման, լիցենզիաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ու վավերականության ստուգման կարգ , ՀՀ կառավարության թիվ 866-Ն որոշման հավելված, 02.08.2018, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124424, հոդված 8-9:

7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ Open &Social. *Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում*

«Open&Social» *տվյալների հավաքագրման, համակարգման, վերլուծության և հասանելիության ապահովման վրա հիմնված գործիքի ներդրում, ինչպես նաև «114 թեժ գիծ» ծառայության «զանգի կենտրոն» ծառայության վերափոխում*

«Open&Social» *հանձնառության շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների՝ միջոցով կապահովվի հանրության առցանց մասնակցությամբ սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ ապահովելով սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացումը հանրության համար:*

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Շահառուին՝ սոցիալական ծառայությունների վերաբերյալ թիրախավորված տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով* http://www.esocial.am *ինտեգրված սոցիալական ծառայությունների առգիծ տեղեկատվական համակարգում* «Open&Social» *գործիքի ներդրում՝ ապահովելով շահառուի կողմից իրեն վերաբերող գործոնների ընտրությամբ՝ սոցիալական ծառայությունների տեղեկատվության ինքնաշխատ տրամադրում* (2016 *թ. նոյեմբեր* – 2018 *թ. հունիս*):
2. *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պարբերաբար իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի և գնահատման հրապարակման ենթակա արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում սոցիալական պաշտպանության ոլորտի «Գիտելիքների կառավարման համակարգ»՝* www.elibsocial.am *ռեսուրսում* (2017 *թ. հունվար* – 2018 *թ. հունիս*):
3. *Հարթակի ստեղծում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշտանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային գործընթացների պարզեցում, ժամանակի կրճատում* (2017 *թ. դեկտեմբեր* – 2018 *թ. հունիս*):
4. *«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում՝ թեժ գծի ծառայությունը զանգի կենտրոն դարձնելու միջոցով, քաղաքացիներից ստացվող բողոքների և ահազանգերի գծով ներքին ուսումնասիրությունների իրականացում* (2017 *թ. հուլիս* – 2018 *թ. հունիս*):

Պատասխանատու կառույց՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. նոյեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարման աստիճանը		Միջանկյալ Ամփոփիչ		Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված	Վատթարացել է	Չի փոխվել	Մարգինալ	Զգալի	Անհայտ
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրագործում			✔		✔	✔		✔		✔					✔				✔		
															✔						

Հանձնառության նպատակը

Հանձնառությունը նպատակ ունի սոցիալական պաշտպանության բոլոր ծառայությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ապահովել ՝ ըստ տարածքի, շահառուի կարգավիճակի և ծառայության տեսակի: Այն կնպաստի տեղեկատվության մատչելիությանը և հանրային մասնակցության մեխանիզմների ապահովմանը:

Հանձնառությունը ներառում է չորս բաղադրիչ՝

1. շահառուի տվյալների հիման վրա սոցիալական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության ինքնաշխատ տրամադրում www.esocial.am հարթակում,

2. սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների առցանց հրապարակում,
3. սոցիալական պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունները և ծառայությունները գնահատելու հնարավորություն,
4. թեժ գծի ծառայության զարգացման միջոցով զանգի կենտրոնի ստեղծում՝ սոցիալական պաշտանության ծառայությունների վերաբերյալ քաղաքացիներից ստացվող բողոքներին և ահազանգերին արձագանքելու նպատակով:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ զգալի

Միջանկյալ գնահատման պահին www.esocial.am կայքն արդեն գործում էր՝ տրամադրելով ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների քարտեզագրում և նկարագրություն, ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ տվյալ ծառայության համար իրավասու սոցիալական խմբերի կատեգորիաների, ինչպես նաև ներկայացնելով յուրաքանչյուր ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանկը: Սակայն ըստ օգտվողի տվյալների տեղեկությունների ինքնաշխատ որոնման հնարավորությունը դեռևս չէր գործում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում www.elibsocial.am առցանց համակարգի էլեկտրոնային գրադարանում հրապարակվել են 2012-2016 թթ. ընթացքում մշակված սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման հաշվետվություններն ու հարակից նյութերը: Համակարգում անվճար գրանցվելու դեպքում օգտատերերը կարող են ավելի շատ տեղեկատվական հնարավորություններից օգտվել: Երրորդ բաղադրիչի շրջանակներում նախատեսված՝ սոցիալական ծառայությունների գնահատման հարթակը դեռևս մշակման փուլում էր: ԱՀՄ հետազոտողը տեխնիկական խնդիրներ էր նկատել social.am և elibsocial.am հարթակներից օգտվելիս: Պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչը նշել էր, որ տեխնիկական խնդիրները պայմանավորված են հոսթինգի ծառայության փոփոխությամբ:

Չորրորդ բաղադրիչի շրջանակներում առաջընթաց չի արձանագրվել: «Նորք» հիմնադրամի Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոնի ներկայացուցչի խոսքով, 1-14 թեժ գծի տեխնիկական վերազինումն իրականացվել է 2015 թվականի սկզբին, ներառյալ՝ առցանց խորհրդատվության ծառայության և թեժ գծի 24/7 ռեժիմով աշխատանքը՝ ոչ աշխատանքային ժամերին զանգերի գրանցման միջոցով: Սակայն 2017 թ. սեպտեմբերից առցանց խորհրդատվության ծառայությունը հասանելի չէր ֆինանսավորման բացակայության պատճառով: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը[1]:

Ամփոփիչ՝ զգալի

Իրականացման երկրորդ տարվա ընթացքում հանձնարարության կատարման զգալի առաջընթաց չի արձանագրվել: Ըստ հանձնառության պատասխանատու պաշտոնյայի, որը ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը, www.esocial.am կայքի գրանցված օգտատերերը հնարավորություն ունեն գնահատել կոնկրետ սոցիալական ծառայությունները[2]: Սակայն զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) որևէ գնահատական առկա չէր, հիմնականում կայքում օգտվողների գրանցման տեխնիկական խնդիրների, ինչպես նաև գնահատման հնարավորության մասին պոտենցիալ օգտատերերի չիմացության պատճառով[3]: 1-14 թեժ գծի առցանց խորհրդատվության ծառայությունը դեռ հասանելի չէ:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ մարգինալ

Հանրային մասնակցություն՝ չի փոխվել

www.esocial.am հարթակը տեղեկություններ է պարունակում բոլոր սոցիալական ծառայությունների մասին, ներառյալ նպաստների նկարագրությունը, համապատասխան իրավական ակտերի հղումները և համապատասխան կազմակերպությունների կոնտակտային տվյալները: Այնուամենայնիվ, տեղեկատվությունը հեշտությամբ ընկալելի չէ, քանի որ ծավալուն տեքստեր և իրավական հասկացություններ է պարունակում, իսկ օգտվողի մուտքագրած չափանիշներին համապատասխան տեղեկատվության ինքնաշխատ ստացման տարբերակը դեռևս հասանելի չէ: Երկրորդ բաղադրիչի դեպքում մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները առկա են elibsocial.am կայքում, որն ապահովում է մոնիտորինգի և գնահատման արդյունքների մասին տեղեկատվության մատչելիությունը հանրության համար:

Ընդհանուր առմամբ, տեղեկատվության մատչելիության փոփոխությունը գնահատվել է որպես մարգինալ՝ մեկ վայրում սոցիալական ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվությունները առցանց հասանելի դարձնելու շնորհիվ: Միևնույն ժամանակ, այս բարելավումը կարող է ավելի նշանակալի լինել, եթե իրականացվի պլանավորված բաղադրիչը (սոցիալական ծառայությունների և աջակցության չափանիշների վերաբերյալ մատչելի և օգտագործողի կարիքներին համապատասխանող տեղեկատվության տրամադրում)՝ նոր մեխանիզմներ ապահովելով տեղեկատվության մատչելիությունը դյուրացնելու համար:

Հանձնառությունը չի բերել քաղաքացիական մասնակցության հնարավորությունների և մեխանիզմների փոփոխությանը: Երբ հարթակը լիարժեք գործի և օգտվողները կարողանան գնահատել տրամադրված սոցիալական ծառայությունները, և եթե այդ գնահատականները հաշվի առնվեն որոշումների կայացման գործընթացում, հնարավոր է, որ հանձնառությունը նպաստի քաղաքացիական մասնակցության չափանիշի բարելավմանը:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակման գործընթացը դեռևս չէր ավարտվել: Գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումների ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը առաջարկել է հանձնառության որոշ բաղադրիչներ շարունակել գործողությունների հաջորդ ծրագրում: ԱՀՄ միջանկյալ զեկույցի մշակման ընթացքում իրականացված՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկումների հիման վրա ԱՀՄ հետազոտողը վերահաստատում է հանձնառության ավելի արդյունավետ կատարմանը և ազդեցության բարելավմանն ուղղված իր առաջարկները `

- կազմակերպել իրազեկման լայնածավալ արշավ՝ ապահովելով հարթակների օգտագործումը սոցիալական տարբեր խմբերի լայն շրջանակի կողմից,
- քննարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից գործարկվող մի շարք հարթակների համատեղման հնարավորությունը կամ մշակել դյուրըմբռնելի մի ամփոփաթերթ (տեղադրելով այն, օրինակ, նախարարության կայքում), որտեղ օգտվողին հարմար և մատչելի ձևաչափով կներկայացվեն տարբեր հարթակների նպատակներն ու հնարավորությունները,
- ապահովել հարթակների հզոր տեխնիկական հնարավորություններն ու պատշաճ գործարկումը,
- ապահովել շարքային օգտվողների համար տեքստի մատչելիությունն ու օգտագործողին հարմար ձևաչափը:

[1] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

[2] Արման Սարգսյան (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 3

[3] Արման Սարգսյան (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2018 թ. սեպտեմբերի 3

8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ Մեկ պատուհան բանակում. ՀՀ զինկոմիսարիատներում «Մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի ներդրում

«Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի իրականացում 2-3 զինկոմիսարիատներում: «Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի փորձարկման և հետագա ներդրման միջոցով՝ զինկոմիսարիատների աշխատանքում վարչարարության բարելավում և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, զինկոմիսարիատի անձնակազմի հետ քաղաքացիների շփումների շրջանակի սահմանափակում, հայցվող տեղեկատվության/փաստաթղթերի տրամադրման ժամկետների կրճատում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *«Մեկ պատուհանին» վերաբերող գործառույթների շրջանակի հստակեցում (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. նոյեմբեր):*
2. *Զինկոմիսարիատների կարողությունների գնահատում և ընտրություն (2016 թ. դեկտեմբեր - 2017 թ. փետրվար):*
3. *«Մեկ պատուհանի» ներդրում (2017 թ. մարտ - 2018 թ. հունիս):*
4. *Հասարակական վստահության փոփոխության վերաբերյալ հետազոտություն (ըստ անհրաժեշտության) (2018 թ. հունվար - 2018 թ. հունիս):*
5. *Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (ըստ անհրաժեշտության) (2018 թ. մարտ - 2018 թ. հունիս):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ չկան

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Կատարման աստիճանը		Միջանկյալ / Ամփոփիչ		Բերե՞լ է դա բաց կառավարմանը				
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող	Չսկսված	Ընթացիկ	Չգալի	Ավարտված	Կատարելի է	Չի փոխվել	Մարգինալ	Շգալի	Անհայտ

8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում		✔			Հստակ չէ		✔			✔				✔					✔			

Հանձնառության նպատակը

Հայաստանում 18-ից 27 տարեկան տղամարդիկ պարտադիր երկամյա զինվորական ծառայություն են անցնում: Զորակոչիկների նախնական կցագրումը և հաշվառումը, զորակոչի գործընթացը, զորացրվածների հաշվառումը և համապատասխան փաստաթղթերի տրամադրումը իրականացնում են տվյալ տարածքում կամ համայնքում տեղակայված զինվորական կոմիսարիատները (զինկոմիսարիատներ): Զինկոմիսարիատների գործունեության շրջանակը բավականին բազմաբնույթ է, և որոշ հարցերում օրենսդրության կարգավորման հստակեցման անհրաժեշտություն կա[1]: Ըստ գործողությունների ծրագրի, «Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի ներդրումը 2-3 զինկոմիսարիատներում հնարավորություն կտա փորձարկել դրա արդյունավետությունը հավաստագրերի, փաստաթղթերի տրամադրման և այլ ծառայությունների մատուցման տեսանկյունից: «Մեկ պատուհանի» ներդրումը հնարավորություն կտա վերացնել այն խնդիրները, որոնք առաջանում են փաստաթղթերի տրամադրման գործընթացում քաղաքացիների հետ անձնական շփումների ընթացքում՝ սահմանափակելով անմիջական հաղորդակցությունը զինկոմիսարիատների ներկայացուցիչների և քաղաքացիների միջև:

Հանձնառությունն առնչվում է վարչարարության և ծառայությունների բարելավմանը, քանի որ այն նպատակ ունի պարզեցնել զինկոմիսարիատների այցելուներին տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը: Այնուամենայնիվ, հանձնառությունը չի ներառում որևէ գործունեություն, որը կբերի թափանցիկության, քաղաքացիական վերահսկողության կամ զինվորական ծառայության ոլորտում հանրության առջև հաշվետվողականության բարելավմանը: Հետևաբար, հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ:

Կարգավիճակը

Միջանկյալ՝ չսկսված

2016 թվականին «մեկ պատուհան» ծրագրի ներդրման համար առանձնացվել են Երևան քաղաքի երկու համայնքների (Նոր Նորք և Կենտրոն) զինկոմիսարիատները[2]: Սակայն կառավարության հրաժարականից հետո 2016 թ. հոկտեմբերին ՀՀ պաշտպանության նախարարը փոխվեց, իսկ նախարարության աշխատանքի ռազմավարությունը վերանայվեց: 2017 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին խորհրդարանն ընդունեց զինվորական ծառայության մասին մի շարք նոր օրենքներ, և բարեփոխումներ նախատեսվեցին նաև զինկոմիսարիատներում, ուստի այս հանձնառության իրականացումը կասեցվեց[3]:

2017 թ. հունվարին ՀՀ պաշտպանության նախարարությունը գործարկեց «Թեժ գիծ» (1-28) ծառայությունը[4], որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս զինվորական ծառայության վերաբերյալ ցանկացած հարցով հարցումներ ուղղել և բողոքներ ներկայացնել, այդ թվում՝ զինվորների նկատմամբ վատ վերաբերմունքի, բժշկական զննումների արդյունքների, կոռուպցիոն դեպքերի կամ վարչական խոչընդոտների վերաբերյալ: Այս առումով կարելի է ասել, որ «Թեժ գիծը» մասամբ ընդգրկում է «մեկ պատուհանի» համակարգում նախատեսված ծառայությունները (տեղեկությունների տրամադրում և բողոքների արձագանքում): Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ԱՀՄ Հայաստանի 2016-2017միջանկյալ զեկույցը [5]:

Ամփոփիչ՝ չսկսված

Գործողությունների ծրագրի երկրորդ տարվա ընթացքում հանձնառության շրջանակներում որևէ գործողություն չի իրականացվել:

Բերե՞լ է դա բաց կառավարմանը

Տեղեկատվության մատչելիություն՝ չի փոխվել
Հանրային մասնակցություն՝ չի փոխվել
Հանրության առջև հաշվետվողականություն՝ չի փոխվել

Հանձնառության շրջանակներում որևէ գործողություն չի իրականացվել: Հետևապես, բաց կառավարման ոլորտում գործելակերպի փոփոխություն չի արձանագրվել:

Շարունակվե՞լ է

Զեկույցը գրելու պահին (2018 թ. սեպտեմբեր) Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագիրը դեռևս առկա չէր: Գործողությունների չորրորդ ծրագրի քննարկումների ընթացքում այս հանձնառությունը շարունակելու առաջարկ չի եղել:

---

[1] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության գործողությունների երրորդ ծրագիր (2016-2018թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf
[2] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc
[3] Ալեքսանդր Ավետիսյան (ՀՀ պաշտպանության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 27
[4] Գործարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Թեժ գիծը», 10.01.2017, http://www.mil.am/hy/news/4576
[5] Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018, https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_Midterm_Report_2016-2018_ARM.pdf

Մեթոդաբանության մասին

ԲԿԳ գործողությունների ծրագրի ամփոփիչ զեկույցը հիմնվում է առկա տեղեկատվության ուսումնասիրության և պետական ու ոչ պետական դերակատարների հետ հարցազրույցների ընթացքում ստացած տվյալների վրա: ԱՀՄ զեկույցը մշակվում է կառավարության ինքնագնահատման զեկույցի և քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի ու միջազգային կազմակերպությունների զանազան այլ ուսումնասիրությունների հիման վրա:

Այս զեկույցը հիմնված է յուրաքանչյուր հանձնառության վերաբերյալ համապատասխան կայքերում առկա տեղեկատվության, օրենքների և կարգերի, ԱՀՄ միջանկյալ զեկույցի արդյունքների ուսումնասիրության, ինչպես նաև պատասխանատու պաշտոնյաների և աշխատանքային խմբի ակտիվ ներկայացուցիչների հետ հարցազրույցների և նամակագրության արդյունքների վրա: Բացի այդ, գործողությունների ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում ԱՀՄ հետազոտողը ներկա է գտնվել ԲԿԳ Հայաստանի աշխատանքային խմբի հանդիպումներին և Հայաստանի գործողությունների չորրորդ ծրագրի մշակման շուրջ 2018 թ. սեպտեմբերին տեղի ունեցած խորհրդակցություններին, ներառյալ ԲԿԳ Հայաստանի աշխատանքային խմբի 2018 թ. սեպտեմբերի 18-19-ի արտագնա հանդիպումը Աղվերանում, որտեղ կառավարության և ՔՀԿ-ների ներկայացուցիչները քննարկում էին գործողությունների չորրորդ ծրագիրը:

Տաթևիկ Մարգարյանն անկախ հետազոտող է, մասնագիտությամբ՝ սոցիոլոգ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունների փորձառությամբ: Նա աշխատել է Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամում և մի քանի այլ հասարակական կազմակերպություններում, իսկ ներկայումս խորհրդատվություն, դասընթացներ, հետազոտական ու վերլուծական ծառայություններ է տրամադրում մի շարք տեղական ու միջազգային կազմակերպությունների համար:

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) նպատակն է՝ նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից կոնկրետ հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը գնահատում է գործողությունների ազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը՝ շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով:

Open Government Partnership